

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- Նահապետեան Հ. Գ. — Քրիստոնէական
ճարտարապետութիւն (պատմական հետազո-
տութիւններ) 419
- Սաֆրաստեան Ա. — Խուրրի - Միտանի
և Խաթիիական լեզուները 431
- Նահապետ Շահիր. — Տաղ ի Ս. Խա-
նըմ նահատակ 435
- Zanolli Prof. Almo. — Un très an-
cien commentaire grec sur le Lévitique,
conservé en arménien 436
- Սարգսեան Հ. Գ. — Փարպեցույն Յառա-
ջաբանը յղկուած 444

ԳՐԱԿԱՆ

- Արսէն Երկար. — Վերաւոր աղօթք . . . 459
- Աճեմեան Մկրտիչ. — Բարի զիւանա-
գէտը 460
- Յովհաննէսեան Հ. Վ. — Ազուլոյ . . . 461
- Փէլիկեան Հ. Ե. — Ս. Նշան (Տաճար
Մ. - Ռաֆ. Վրժիթի ամարանոցին՝ Ազուլոյ) 462
- Քիւրտեան Յ. — Քուչակեան նոր տա-
ղաշարք մը 464
- Երեմեան Հ. Ս. — Գրական Գրոնիկ.
Գեղամ, Կոմիտաս Վարդապետ, Գրիգոր
Ջօհրապ, Աղեքսանդր Մանթաշեանց. . . 493
- Գիտողութիւններ 494
- Կիւրդեան Բրոքի. Լեւոն. — Վերգիլեան
ծառը 506

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

- Երեմեան Հ. Ս. — «Վասպուրական» . 473

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

- *** Վենետիկի Միջազգային գեղարուես-
տական ցուցահանդէսը (ԺԸ. Երկամեայ -
1932 479
- Մուշրաֆեան Զարեհ. — Գեղարուեստի
կազմաւորումը (Սպանիական փիլիսոփա-
յական մտածումը) 483
- ** Վենետիկի քարաշէն նոր կամուրջը. 495

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

- Գեորգ Կոյիւյ. — Հայաստան և Ֆրան-
սա (Թրգոմ. Ֆրանսերէնէ) 500
- Թովմասեան Հ. Թ. — Հայաստան և հայա-
գէտ բարձրաստիճան եկեղեցական մը . . 503
- Խմբ. — Արձակուրդի յուշեր Մուրատեան
և Մ. - Ռաֆայէլեան վարժարաններու կեան-
քէն - Վենետիկ-Փարիզ 513

PHILOLOGIE

- Nahabédian P. G. - L'Architecture
des églises (recherche historique) 419
- Safrastian A. — Les langues Chourri-
Midanni et Chatti 431
- Nahabed Chaïr. — Ode à la martyre
S.te Chanoum 435
- Zanolli Prof. Almo. — Un très ancien
commentaire grec sur le Lévitique, con-
servé en arménien 436
- Sarkissian P. G. — L'introduction de
l'Histoire de Lazare de Pharbe étudiée
et ordonnée 444

LITTÉRATURE

- A. Yergath. — Prière 459
- Adjémian M. — Le bon politique 460
- Horhannessian P. V. — Asolo 462
- Paitchikian P. E. — St. Nichean (Cha-
pelle du Collège M. - R. à Asolo). 462
- Kurdian H. — Une nouvelle série
de chants de Koutchag 464
- Erémian P. S. — Chronique et notes
littéraires 484
- Gurékian Prof. Léon. — L'Arbre Vir-
gilien 506

RECENSIONS


- Erémian P. S. — «Vaspouragan» . . . 473

BEAUX ARTS

- *** XVIII Exposition International
d'Art à Venise 479
- Moutafian Zareh. — Formation de
l'Art (La pensée philosophique espagnole) . 483
- ** Le nouveau pont de Venise 495

ECHOS d'ARMÉNIE

- Georges Goyau. — L'Arménie et la
France 500
- Tomadjian P. T. — Un prélat armé-
nophile et arméniste 503
- Réd. — Souvenirs de vacances des
Collèges Moorat et M. - Raphaël - Ve-
nise-Paris 513



ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՑԱԿԱՆ

1843-1932

ՀՈԿՏԵՄԲԵՐ - ՆՈՅԵՄԲԵՐ

ԹԻՒ 10 - 11

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ Է

Հայ ճարտարապետութեան հոգին

(Շար. տես «Բազմալէպ» 1932, էջ 241)

Լ.Զ. Մինչեւ ցայս վայր՝ մեր գրածնե-
րով կամեցանք ցուցնել որ Հայք, նա-
խապատմական ժամանակներէ ի վեր,
չաղթական կամ թէ բնիկ ըստ Ս. Գրոց
ազգաբանութեան, ունեցած են իրենց սե-
փական և տեղական ճարտարապետու-
թիւնն, սկսած իրենց գմբէթածածուկ տնա-
կէն և «Բազիլիկալ» ոճի վրայ շինուած
բաշլայիկ (ախոռ) մինչեւ միջնադարեան
կեդրոնական շինուած գմբէթը չորս կա-
մարակապ սիւններու վրայ: Միանգա-
մայն կամեցանք մատի ծայրով դաշիւ,
զգացնելու չափ Հայկական ինքնօրէն ճար-
տարապետութեան հակառակորդներուն՝ թէ
Հայք կարիք չունէին ուղղակի օգտուելու

հարեան երկիրներէն, ուղղակի կ'ըսեմ,
իմանալով իբր հետեւորդ, ընդօրինակող-
ներ, քանզի ըսած ենք որ ազգերը ընդ-
հանուր կերպով փոխադարձ ազդեցութիւն
ունեցած են գեղարուեստի մէջ:

Երբ նախնի ժողովուրդներու գաղթա-
կանական հոսանքը դադրեցաւ և տեղա-
ւորուեցան ու արմատացան հողագնտիս
զանազան մասերուն վրայ, միայն Հա-
յաստանէն կամայ կամ ակամայ գաղ-
թողներ կամ տեղահանութիւններ տա-
րածուեցան դէպ ի հարաւ և արեւմուտք,
իրենց հետ տանելով ազգային մշակոյթ
և բնատուր արուեստ: Ասորեստանի հզօր
ինքնակալութիւններն այնպէս օգտուեցան

ի հնուն հայկական գեղարուեստէն, ինչ-
պէս պատերազմէն՝ յետոյ հայ գաղթա-
կանները զիրենք ասանջականող երկիր-
ներուն մէջ մտցուցին յախճապակիի և
գորգաշինութեան արուեստները, իրենց
սեփական եղանակով՝ իրեն և նորութիւն։

Ինչպէս Քրիստոսէ քսան դար յետոյ
Հայ ազգը իր բնատուր հանճարով կը
պահէ իր ցեղին յատկութիւնները, հետը
տանելով նորութիւն և ստեղծագործու-
թիւն, այսպէս քսան դար Ն. Ք. քաղա-
քակրթութեամբ զօրեղ Ուրարտական կամ քստ
Երեմիայի Այրարատեան թագաւորութիւն-
ները, Նախարարական տունները ընդհար-
ուելով Ասորա-Բաբելական աշխարհակալ
և միահեծան թագաւորութեանց հետ, եր-
բեմ յաղթեց են, և երբեմ յաղթուեց են,
միշտ պահելով իրենց մշակոյթի ներգործա-
կան դերը նաեւ իրենց սահմաններէն դուրս։

Գրաւոր պատմութիւնը և սեպագծեւ ար-
ձանագրութեանց անհաստատ ընթերցա-
նութիւնը գերակշիռ դեր մը կու տան,
առհասարակ, Ասորա-Բաբելական բռնա-
կալներուն, և Հայերը կը դնեն անոնց
ձեռքին տակ իբր հարկատու և աւատա-
կան տէրութիւն մը։ Սակայն այդ չի նշա-
նակեր որ Հայերն ինկած են նաեւ Հա-
րաւայիններու մշակոյթին տակ, իբր թէ
Ասորա-Բաբելական միտքը ազգած և
տիրած ըլլայ հայ մտքին, հայ մտածե-
լակերպին, փոխած ըլլայ հայ ըմբռնումը։

Ոչ, ինչպէս զէնքով յաղթական Հոմը,
բարոյապէս և գրականութեամբ յաղթուե-
ցաւ պարտուած Յունաստանէն, այսպէս
հզօր և գոռոզ Բաբելոնն ենթարկուեցաւ
տիրած երկիրներուն ազդեցութեան, ա-
նոնք շատ բան առին Եգիպտոսէն, եւ
անոնց հետեւողութեամբ շինեցին իրենց
կախաղանաւոր պարտէզներով պալատ-
տոսէն, Փոքր Ասիայէն և Հայաստանէն։

Այս երկիրներէն բռնի տեղահանուած և
գերուած ժողովուրդները, որոնք քաղա-
քակրթութեամբ բարձր մակարդակ մը
ունէին, ազնուացուցին անոնց արիւնն
ու տուին գեղեցկին ճաշակը։ Եկամուտ

արուեստը և ճարտարագործութիւնը ամու-
սնաց և չունեցաւ յաջորդութիւն և ա-
ռաւելագոյն զարգացում։ Չինուորական
ուժով, զէնքով բայց ոչ մտքով կանգնած
Ասորեստանը՝ նոր և կենսունակ ազգերու
ձեռքով կործանեցաւ, այլեւս չկանգնելու
համար, անոնց ձեռագործները հողին տակ
թաղուեցան։ Նոյնիսկ Մակեդոնական տի-
րապետութեան ժամանակ անընդունակ
գտնուեցաւ իր գոսացած արմատին վրայ
արեւմտեան քաղաքակրթութեան և զար-
գացման բնորոշ հոգին պատուաստելու։

Օտարներու ձէթով վառած ջահը ժա-
մանակապէս փայլելէ յետոյ՝ շիջաւ և
կորաւ։

ԼԵ. Անշուշտ այսպիսի հոգեբանական
համեմատութենէ է որ Աւիշան ներշնչուած
գրած է.

Տեսի զԲաբել և զԱսոր...
Նա մամաւառն տեսի մէջ ոչ.
Հողակուտակք թաքթաքոր,
Ամայութիւնք յամայոջ.
Ձորքս ծաղեալ հողմ ու աւազ
Յարժակալայր ամարգիլ՝
Դիմամարտիմ համապազ
Ամղը քամ զամղը վարգիլ.
Ուր ՇԱՄԻՐԱՄ ՇՊԱՐԷՐ ՎԷՄ՝
ԱՆՎ ՈՐՋԱՏԵԱՆ ԿՈՒՋ ՈՒ ԱՂՈՒԷՄ՝

Անկրօն և նիւթապաշտ Միջագետացւոյ
ախոյեան մ'են կրօնասէր և աստուածա-
պաշտ Եգիպտացիք։ Կրօնքն է ներշնչող
մեծամեծ և անմահ գաղափարներու և այդ
մասին առաջին մրցանակը կորցեց Եգիպ-
տոս, որ իր երկար և խաղաղ տիրապե-
տութեան ժամանակաշրջանին՝ ամենա-
նուրբ ճաշակով ստեղծեց առաջին քա-
ղաքակրթութիւնը։ Ուժեղ իր կրօնական
զգացումներուն մէջ, ծառացաւ յաւիտե-
նական և անփոփոխ ժամանակին դէմ, որ
կը փոխէ ու կը փոփոխէ երկրիս երեսին
գոյութիւն ունեցող կերտուածները և ա-
նոնց պետը՝ բանական մարդը։ Իրենց հա-
ւատքը ներշնչեց (բարեպաշտ եգիպտացի-
ներուն) գովելի նախանձով մրցիլ ամենա-
ծախ ժամանակին հետ, անոնք կենդանեաց
համար վիթխարի և հաստաբետ տաճար-
ներ կերտեցին որպէսզի բնակեցնեն իրենց

ՄԸՆԶԷ ՄԵՄՆԵԱՆ ՎԷՄՆ ՅԱՐԵԻ,
ԱՅԼ Ի ՍԻՐՏ՝ ՈՉ ԱՐԴԱՐԵԻ՛

Յունաստան, մտքի և գեղարուեստի եր-
կիրը, մինչեւ ցարդ իբր թագուհի բազմած
է զիտութեան տաճարին մէջ. Խորենացին
գրած է առ Սահակ Բագրատունի. «Վասն
որոյ և զբոլոր իսկ զՅոյնս ոչ դանդաղիմ
մայր կամ դայեակ ասել իմաստից»։ Նոր
ազգեր անոր առջեւ երկրպագու, չեն կա-
րող պահ մը անջատուիլ մտքով և փնտել
բնութենէն վեր ծնունդ առած գեղարուեստ
մը, նոր ոճով, նոր շունչով և նոր կեան-
քով, որ Ատտիկէի չոր և ցամաք երկնքի
տակ աշխարհ եկած չէ։ Եւ չէր ալ կա-
րող գալ. վասն զի հին աշխարհի յոյն
հանճարները փայլեցան երկրիս վրայ,
«զերկրաւորս խորհելով» օրինակեցին եր-
կրածին գեղեցկութիւնը, բնութեան գեղով
յափշտակուած, նմանականութեան մէջ
հասած ի ծայր կատարելութեան, անոնք
սիրեցին իրենց ձեռագործ արուեստին տալ
այն բնական գեղեցկութիւնը զոր նիւթա-
կան աչքերով կը տեսնէին. Հմտաբերեցին
բարձրանալ մինչեւ երկինք և հոգւոյ աչ-
քով դիտել Արարչի աներեւոյթ գեղեցկու-
թիւնները. ասոր համար հարկաւոր էր
գերբնական հաւատք զոր չունէին. եթէ
վարդապետողներ յայտնուեցան, անոնց
մոլախինդ խմցուցին։

Փիղիասի, Պրաքսիտելէսի, Սկապայի
են. պէս գերագոյն հանճարները, արա-
րածական գեղեցկութիւնը մարմնացուցին
քարի մէջ. Պարթենոնի Արամազդին տուին
կեցուածք մը, որով ինքնագոհ թագաւոր
մը զինքը կը ցուցադրէ մեծ հանդիսաւո-
րութեան մը ժամանակ կամ փառաւոր
յաղթութենէ մը յետոյ, իրեն վրայ հիա-
ցող ժողովրդեան։ Անոր կենդանագրի առ-
ջեւ աղօթաւորը կը մնայ հիացած գեղա-
գրուագ արտայայտութեան վրայ, բայց
մտքով տաճարէն դուրս ելլելու պէտքը
չի զգար, հոգին մարմնոյ մէջ բանտար-
կուած կը մնայ, հառաչանք մը սրտէն
դէպ ի վերամբարձ երկինք չի թռչիր։

Հ. Աւիշանի միտքը պարուրուած յու-
նական գեղարուեստի իմաստով ու ճաշա-

պաշտած աստուածները, աղօթեն անոնց
երեսին և անոնք ալ խօսին իրենց սըր-
տին։ Սակայն կը պակսէր անոնց մօտ
սէրը, որով կարելի է մերձենալ Աստու-
ծոյ, և յայտնի չէ թէ անոնք մարդու
ոչնչութիւնն հասկցնելու համար, թէ խըղ-
ճերին թեթեւեղելու համար, վերացական
աստուածութեան գաղափարը, որուն պատ-
կերը տիեզերքի մէջ արեւն էր, փոխեցին
և ներկայացուցին զայն թռչնոց, չորքո-
տանեաց և սողուններու կերպարանքով։
Ուստի եգիպտացին իր տաճարներուն մէջ
կրօնական ջերմութիւն չէր զգար, այլ
օտար էր և հեռու երկնքէն, որքան ինքը
հեռու էր անրան և անասուն Ապիս կո-
վէն և թեւաւոր բազէէն։ Իրենց մեռեալ-
ներուն համար կանգնեցին հսկայ բուր-
գերը, հանդերձեալ կեանքի դիտարաններ,
ստորերկրեայ դամբաններ մարդոց համար՝
որոնք ի կենդանութեան արեւի տակ հա-
ղորդ եղած էին աստուածական իշխա-
նութեան, անոր փոխանորդ կամ ետե-
ղակալն եղած էին, ուստի կը դիագարդէին
մարմինը, հոգւոյ ընկերը, անապական
պահելու համար, մինչեւ որ հոգին եօթնա-
պարոյր երկնքի սրբամաքուր կամարներէն
անցնելով, զար միանալու իր մարմնոյն
հետ. և այդ հաւատքը տարաւ զիրենք
հոգեփոխութեան վարդապետութեան,
մինչեւ որ սրբուելով արժանի ըլլար Ե-
լեւսեան դաշտերու երջանկութեան։ Եգիպ-
տական գործը բոլոր եսապաշտութիւն էր
և հաշիւներու վրայ հիմնուած։ Անոնց
աստուածը քարացած և ցուրտ էր, որով
ժողովուրդն ալ պաղ էր և սիրելու սիրտ
չունէր։

Հ. Աւիշան Եգիպտոսի կրօնական ոգին
համեմատութեան առնելով հայկականին
հետ, այսպէս կ'արտայայտուի.

Տեսի զՀռամսէն և զՄեմփիս
Լերիմք և այլք կուսակովի-
Յոր՝ պատ ի պատ ի կտաւիս
Նմջէ գմռեալ և ամփոփ
Բազմադարեամ հեթանոս.
Եւ շուրջ՝ զուգեալ յամառակ
Ամիսոմջ ամյոյս ծեր Նիլոս՝
Յածի ալեօք տփգումակ,

կով, ցուրտ սարսուռ մը կ'անցնի վրայէն, երբ կը յիշէ վաղարշապատի Գրիգորաշէն կաթողիկէն և համեմատութեան եզերքներն այնչափ հեռու կը մնան որչափ երկինքը երկրէս.

Տեսի գղըղեակ Ատտիկայ
Բազմադրուագը զԱթէնք.
Խոնք Պերիկլի, դաստ ֆիդիայ՝
Ձեղեմ շինիցը ապաւէնք.
Հազիւ Յշխար խուսափուկ
Ճգնի երդմամբ վըկայել՝
Թէ ցարտար մատմ և փափուկ
Երբեմն ինքեան էր վայել.
ԴՐԴՆ՝ ՁՄԻՏՍ ՅԱՄՊ ԳԵՂԵՑԿԻՆ,
ՈՉ ՄԻՆՉ ՅԵՐԿԻՆՍ՝ ՈՒՐ ՀՈԳԻՆ.

Հին հեթանոսաց կրօնական հաւատալեաց բարձրութիւնն ամպերու հետ կը շփուէր, և չէր թափանցեր մինչեւ երկնքի խորութիւնը, ուր իմացականութիւնը, իրազեկ աներեւոյթ զօրութեան, կ'ախորժէր դնել երկնաւոր թագաւորի աթոռը, և երկիրս էր անոր պատուանդանը: Հետեւապէս տաճարներն իրենց ձեւովն և կազմովը, կրօնքի արտայայտութեան կոթողներ էին: Մենք տեսանք նախընթացապէս որ հեթանոսաց տաճարները չէին պատկերացներ վերացականը, հոգեկանը, աստուածականը: Երկու տիպարի էին անոնք, կամ կուսնակով ալբեր էին, սիւներու անտառ մը հեղձամղձուկ կ'ընէր ազօթաւորը խորհրդական մթութեան մէջ ընկղմած, և մասամբ անտես և անճանաչ ժողովուրդի ամբոխէն, և կամ շքեղ դահլիճներ, արքունական տաճարներ, կամարակապ սրահակներ, ուրտեղ ոսկին և արծաթը շուայլօրէն կը խտուէին յաճախողներու աչքերը, և այդ ճաճանչափայլ մեհեանին մէջ կը բազմեցնէին աստուածներ, որոնք հաղորդ էին մարդկային կիրքերուն և հաճոյքներուն, ուստի ոչ պատկառանք և ոչ երկիւղածութիւն կ'ազդէին դոնէն ներս մտնողներուն վրայ. տափարակ ձեղունը ցոյց կու տար կեանքէն չբաժնուելու տրամադրութիւնը, կամ թէ աստուածները կապելու կաշկանդելու համար որ երկրի վրայ իշխեն այնքան՝ որքան մարդիկ կամենան. կապիտուլիոնի Արամազդը Ծերա-

կոյտի իշխանութեան կը հպատակէր, և անոր վճիռները չափ և սահման կ'որոշէին զից իշխանութեան: Եւ եթէ երբեմն Ոլիմպոսի գագաթն հանէին, հոն իրենց մարմնական հաճոյից անձնատուր, կը հոգային ամպի տակ սքողուած պահել, որպէս թէ Բնութեան աչքը չխուովէր անոնց խիղճը:

Մինչդեռ Հայաստան հեթանոսութեան իսկ ժամանակէն, չունէր ո՛չ կուստուններ և ո՛չ ալ Եգիպտացոց և Յունաց պէս կազմակերպուած քուրմեր և ծիսակատարութիւններ: Այլ ունէր Բնութեան (Վահագնի) Արեւու և կրակի պաշտամունք, նախնի Արիականներու կրօնքը, որով կը դաւանէին միակ աստուածութիւն մը բարձրեալ և ամենակալ. բազմաստուածութիւնը մինչեւ Հայ Արշակունիները տաւրազուած էր Հայաստանէն:

Իսկ երբ մեր գեղարուեստասէր թագաւորները փոխառութիւն ըրին Յունաց աշխարհէն և հայութեան կնիքը տպաւորեցին վրանին, անոնց համար տաճարներ կերտեցին հին փոխառական ըմբոստ ճարտարապետութեան ոճով, որ կարելի է ըսել, համապատասխան էր իրենց հոգեկան բոլոր գաղափարներուն, և հանապազմազուտ մը ազատուիլ նիւթականէն. եւ երկրաւորէն: Եւ լաւագոյն արտայայտութիւնն եղաւ երկնակամարի նմանութեամբ գմբէթով ծածկել իրենց տաճարները, թէև տակաւին որմերու վրայ հեծած: Արմատական փոփոխութիւն մը հին ոճին՝ պահուած էր քրիստոնէական կրօնքին, Հաւատարմական լոյսով լուսաւորուէր Հայաստան: Գրիգոր Լուսաւորչի տեսիլքը և կաթողիկէի հիմնարկութիւնն հիմն եղաւ Հայկական Ճարտարապետութեան, որ հինգերորդ դարու վերջին պիտի գտնէ իր կատարեալ զարգացումը, և անոր ճոխագոյն կառուցումը Բազմաստուածաց Ոստանին մէջ տեղի պիտի ունենայ:

Քրիստոնէութիւնը նուիրագործելով արիական կրօնքի նշանաբանութիւնը, նիւթական արեւի փոխանակ, կը նկատէր հաւատոյ աչքով Երկինքը բազմած Ար-

հուսկ փառաբանի իւր տաճար՝
Յամամակաց միջօրեայ
Եւ յաշխարհաց միջակէտ՝
Յամքոյթ յործանս Ախուրեայ
Եւ ի ծործորս ծաղկաւէտ,
Երկնեւ ծընունդի Անուշտան,
Ըզբեզ՝ վեհեց վեհակամ:

Այդ պահուն Նահապետին համար
Ամիմ էր շէն,
Աշխարհս աւեր.

Եթէ հին ազգերու մէջ փնտենք Հայոց այս յամառ յարուժը Փոխազգական աւանդական ճարտարապետական ոճին, նմանը միայն Եգիպտական ազգը կրնանք գտնել, որ իր զարգացումի դարուն, կարծես երեք հազար դարեր Ն. Ք., իր հաւատալիքներուն առարկաները դրոշմեց լուրջ արուեստի կատարելութեամբ, եւ միշտ նոյնօրինակ ձանձրացնելու չափ, և կարգէ դուրս վրէժխնդրութեամբ դաւերու ընթացքին հետ պահեց անփոխոխ և միշտ խորհրդագրած լուրջամբ և խուսափեց: Առանձին էր Եգիպտոս, անոր սահմաններն էին ջուրը եւ Սահարայի աւազուտը:

Քրիստոնէութիւնը որոշ չափով կըղզիացուցած էր Հայաստանը միւս ազգերէն, թող իր աշխարհագրական դիրքը, մէկէն քաղաքական պատճառներով, միւսէն կրօնական խնդիրներով: Յամառօրէն կեդրոնացուց իր մէջ ինքնատիպ կրօնական զգացումները, համոզումները և թշուառ ու ալէկոծեալ օրերու ընթացքին, միակ միւթաբութիւն և ապաւէն փնտռելով իր ազգային Եկեղեցւոյ ծոցը: Հայրենասիրական վրէժխնդրութեամբ զինուեցաւ ինքնապաշտպանութեան, ամփոփուեցաւ իր երկրի և լեզուի սահմաններուն մէջ, հեծեց և մնչեց արիւնոտ տարիներու մէջ և մզեց իր որդիքը Աւարայրի դիւցազնական մեծ կռուին: Արտազեան դաշտերու վրայ սաւառնող ոգին քաղաքականը չէր, այլ Եկեղեցւոյ, կրօնքի սուրբ ոգին, որուն պաշտպանութեան համար Հայաստան ուխտած էր զոհել իր քաջորդիքը:

Աստուածութեան հարազատ ըմբռնումը, կրօնքի և սրբազան պաշտամունքներու

դարութեան արեգակն և թագաւորը խաղաղութեան: Այն մեծ և վսեմ ամբողջութիւնը զոր երկինք և երկիր կազմէին Քրիստոս թագաւորի արքունիքը, զայն պատկերացնելու համար, համեստ չափերով, Հայ միտքը ամէն ջանք և ճիգ թափեց անշատելու գմբէթը հեթանոսական որմերէն և դնել չորս աւետարանական սիւներու վրայ, վերամբարձ և վերասլացիկ կաթողիկէի հետ կազմելով մի ամբողջութիւն, երեւակայութիւնը կամ նոր հաւատքը հասցնելով անոր բարձրութիւնը մինչեւ երկինք նոր այս երեւցած աստղերէն վեր:

Աստուածութեամբ հայրենասէր և աշխատասէր Հ. Ալիշան, իր էութեան լաւագոյն մասով ապրեցաւ և շրջեցաւ հայրենի յիշատակներու մէջ: Արդ երբ մտքով ժուզար Անիի մէջ, խոտեր և քարեր լեզուելած կը պատմէին Հայ մայրաքաղաքի փառաւորութիւնները. անոր աչքին չքացած էին աւերակներ, հազար տաճար, բիւր պալատ թագաւորի վառերով զարդարուած, ժողովուրդը տօնական զգեստներով պնտուած կը հետեւին թագաւորին և թագուհւոյն շքախումբին, դէպ ի Մայր եկեղեցին: Մէկ ակնարկով կը համարի տեսնել զԱնի համակ եկեղեցի, որուն մասերը կը կազմեն լայնագմբէթ Առաքելոց եկեղեցին, բոլորաշէն բազմախորշ սիւնազարդ գմբէթաւորուած Ս. Փրկիչը, Դազկայ շէն, չքնադատեսիլ Չուարթնոցը Ծաղկածորի կողմը, Ս. Գրիգոր Ապուղարենց հայկական դամբարանի մը նազելի կոթողը, կը հասնի Մարեմայ վեհ տաճարին առջեւ, որուն վրայ Տրդատ ճարտարապետ դրած է իր հանճարի կրկնիքը. հոն բոլոր Հայաստանի անցեալն էր վառ գոյներով, իբր ի պատտառի, կը կանգնի անոր հանճարին առջեւ, և ոգւոյ խանդը, սիրոյ թոխքը կ'երգէ ի դէմս դերամբարձ կաթողիկէին Մայր եկեղեցւոյն Անույ.

հրաշագործակ ճիզմ հայկիմ,
հարըստութիւն և համձար,
ՍԻՐՏ ԽԱՆԴԱԿԱԹ, ՋԵՐՄ՝ ՀՈԳԻՆ,

միջոցաւ, ուժգին կը ներգործէ արուեստաւորի սրտին վրայ, և կը ծնուցանէ անոր մէջ անսահման բարձրութեան, վսեմի և գեղեցկի գաղափարը: Եկեղեցւոյ սրբազան երգեցողութիւնները, սրտաբուխ աղօթքները, խորհրդական ծխակատարութիւնները, արդարեւ կը յուզեն և կը զբաւեն հաւատացեալ աղօթաւորի սիրտը, և յափըշտակուած կարծես թէ առկա կը մնայ ընդմէջ երկնի և երկրի, հոգւոյն թեւերով հրեշտակաց դասուն աւելի մօտ կը գտնուի քան մարդոց:

Հայաստանեայց եկեղեցին ունի հրաշալի ստեղծագործութիւններ սրբազան երգերովէ՛ իմաստով և թէ եղանակով, մեր Շաւրակները գլուխգործոց են Հայ բանաստեղծութեան, բնած ճշմարիտ հաւատացեալ ժողովուրդի կուրծքէն:

Երբ դեռ Գրիգոր Լուսաւորչի ժամանակէն մնացած անշուք և փայտածածուկ եկեղեցիներու մէջ, հաւատքով լի ժողովուրդը, Ծաղկազարդի կերակէին ներկայ կ'ըլլար Դոնբայէքին, ո՞վ կրնայ երեւակայել թէ ինչ զգացմունքով անոնք կը սպասէին փակ դրան առջեւ, և ինչ սրտառու աղօթքով, քահանային հետ անոր բացումը կը հայցէին Քրիստոսէ: Անոնց հոգեկան աշխարհին առջեւ ինչպէս կը պատկերանար վերին երուսաղէմը, որ ըստ Առաքելոյն՝ Մայր մեր է ամենեցուն, անոր փառքն և վայելչութիւնը. անոնց երեւակայութիւնը աւելի լաւագոյն մը չէր կրնար ստեղծել քան անձեռագործ եկեղեցին, մինչ զուրար կանգնած՝ կը տեսնէին բարձրակամար երկինքը, ուր Անհրական Էալը բազմած կը հաւատային, պարածածկուած անստեղծ լուսով: Բայց կը զգային միեւնոյն ժամանակ իրենց խեղճութիւնն իբրեւ զրախտէն արտաքսուած, և ներսէն կը լսէին Սարկաւազին ձայնը և կ'ըմբռնէին որ այն դուռը, որուն առջեւ կեցած էին, աչքի երեցած քարն ու փայտը չէ, այլ իրենց հոգւոյն փնտռած անտես և անիմանալի տաճարը, յորում իրենց սիրած և պաշտած Աստուածը կը բնակի: Հայցող քահանայի և վրէժխնդիր սարկաւազի վի-

ճարանութիւնը, կը թափանցէ մինչև անոնց հոգւոյն խորը. ամբողջ մարմինը դող կ'ելլէ: Երբ ներսէն կը լսեն խորհրդաւոր ամպօրոտ ձայնը, և կ'իմանան Քրիստոսի եկեղեցւոյ նշանակութիւնը՝ «ԶԻ ՍՍ. Ե. ԳՈՒՌՆԵՐԿՆԻՑ... ԱՐԳԱՐՈՅ ՀԱՆԳԻՍՏ, ՄԵՂԱՌՈՐԱՅ ՔԱՒԱՐԱՆ, ՀՐԵՇՏԱԿԱՅ ԲՆԱԿԱՐԱՆ, ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԲԱՅԱՐԱՆ, ՍՐԲՈՅ ԺՈՂՈՎԱՐԱՆ, ՏԵՂԻ ԱՊԱՒԻՆԻ, ԼԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԵՒ ՏՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ»:

Հայ ճարտարապետը, քարագործը այս յուսադրական և խրախուսիչ բառերս լսելէն յետոյ, կրնար անտարբեր մնալ, երբոր քահանան կ'ըսէ. « քացիք ինձ զյորուն տրդարտարեալ... » և ժողովուրդն ետեւէն հանդիսաւորութեամբ եկեղեցի կը մտնէ երգելով. « Զորդանդեալ քո զյորուն քաց Տէր, և արժանի տրա զմեզ յաւեղեալ յարկոց քոց ընդ տարբա քո »: Ո՛չ, ամէն հայ փորձած է այդ վայրկեանի զգացած հոգեկան ուրախութիւնը, հաւատքի քաղցրութիւնը. կ'ենթադրուի որ Հայ քարագործն ալ կրօնական յուզումով, պատկերելով մտքին մէջ լուսեղէն յարկի սքանչելի մեծվայելչութիւնը, սկսած է որոճալ իր մտքին մէջ, իր տեսած համեստ եկեղեցիէն լաւագոյն մը և աղօթքի իմաստին համապատասխան Տուն մը շինել իր պաշտած Փրկիչ Աստուծոյն ու թագաւորին: Ուստի նա խորասուզուած իր կենդանի հաւատքին խորհուրդներուն խորն և ամփոփութեամբ իր մտքի խորհրդանոցին մէջ, զգացեր է ըմբռնել է որ Աստուծոյ տանը պէտք տալ այնպիսի ձեւ և ճարտարապետութիւն, որ ինչպէս ըսինք, բովանդակէր իր մէջ մի միայն կաթողիկէ և Առաքելական եկեղեցւոյ ՀԱՒԱՏԱՄԲԸ, այնպէս որ պարզամտներն անգամ երբ եկեղեցի մտնեն, համոզուին թէ հեթանոս տեղ մը չէ, այլ իսկապէս Տուն Աստուծոյ: «Եկայք եկեղեցի ի լեառն Տեառն և ի Տուն Աստուծոյ մերոյ»:

Լճ. Օգոստոս Մեծէն սկսած Հռոմի կայսերը մինչև Դիոկղետիանոս, երեք հարիւր տարի, ջանացին իրենց կողմը պահել Հայաստանը և զօրացնել զայն իբր ամ-

բարտակ մը պարսկական ուժին դէմ: Կոստանդիանոս Մեծի յաջորդ Բիւզանդիոնի քրիստոնեայ կայսրներէն ալ կը յուսացուէր նոյն հեռատես քաղաքակաւութիւնը, սակայն ընդհակառակը պատահեցաւ, հարիւր տարուան շրջանի մէջ Հայերն արհամարհութիւն կրեցին, անոնք առիթ չփախցուցին ճնշելու երկրի թագաւորները և ամփոփելու անոնց իրաւունքները: Հասկնալով այս ներհակ և նենգամիտ քաղաքականութիւնը, Պապ և և վարազդատ ու մեծամեծներէն շատերը հակամիտեցան Պարսից կողմը, որոնք ուժով տային այդ մերձեցումին: Պապ թագաւորը որ Բիւզանդիոնի արքունիքը դաստիարակուեր էր, հակառակ միակողմանի փաւստոս Բիւզանդի բաշտանքներուն, նա հասկցող մէկն էր, դեռ քաղաքական անջատումն առաջ չընելով՝ փորձեց խզել աւանդական եկեղեցւոյ կապը կեսարիոյ աթոռին հետ: Մուշեղ Մամիկոնեան իբր վրէժ մահուան Մեծին Ներսէսի, վրէժեցուց Պապի ծրագիրը՝ որ դաւաճանութիւն կեանքն ալ կորսնցուց: Յաջորդը, վարազդատ թագաւոր, աւելի եւս ենթարկուեցաւ Յունաց երգիծանքին, չկրցաւ զսպել իր զայրոյթը և սպաննել տուաւ Մուշեղ Մամիկոնեան ի վրէժ Պապի մահուան, սակայն ինքն ալ շղթայի զարնուեցաւ և իբր կայսեր անհաւատարիմ, թագէն ու կեանքէն ալ զրկուեցաւ:

«Բարեացապարտ և բարեպաշտ» Մեծին Թէոդոսի ներքնագործ և խորամանկ ծրագրէն առաջ, Պարսիկները պնդակուշտ և կատաղի պատուհաս եղած էին Բիւզանդիոնի: Շապուհ Բ Յուլիանոս Ուրացողի բանակը Միջագետքի մէջ ջախջախելէն յետոյ, յաղթական բանակն առաջ մղեց մինչև Քաղկեդոն, ծովափին վրայ, Բիւզանդիոնի հանդէպ սիւն մը տնկեց, որուն վրայ սիգապանծ առիւծ մը կեցած, թաթին տակ գիրք մը բռնած էր: «Միւս առ ծռալուն կուգեմ, կ'ըսէ խորենացին¹, և առիւծ ի վերայ՝ մատնան ընդ ոտիս ունեւոյ՝ որ նշանակէ այսպիսի ինչ: Քանզի առիւծ հզօր է ի գազանս, այնպէս եւ

պարսկականն՝ ի թագաւորս. և մատնան ժողովիչ է իմաստութեան, որպէս Հռոմայեցւոց տէրութիւնն»: Մեկնութիւնը մեզի կը թուի թէ խորենացւոյն չէ, զի չի համապատասխաներ Շապուհի մտքին: Այդ կողմոյն սպառնալիք մ'է քրիստոնէութիւնը ջնջելու ո՛չ միայն Արեւելքի, այլ նաեւ Արեւմուտքի մէջ. ուստի մատնանը, ըստ իս, ԱԻԵՏԱՐԱՆՆ է, զոր կ'ուզէ ենթարկել Մագդեզանց օրէնքին:

Մեծն Թէոդոս Պարսիկներէն խաղաղութիւն մուրալու համար, փութաց զոհել Հայաստանի քրիստոնէութիւնը՝ անհաւատ Պարսից բարեկամութեան հետ: Նա Գդարու վերջերը, 392ին, կիսեց Հայաստանը Պարսից հետ, մահացու հարուած տալով ազգային կեանքին և հայրենիքի միութեան: Բիւզանդիոն կորսնցուց ընդ միշտ մեծ աշխարհ մը, դաշնակից և բարեկամ ժողովուրդ մը հռոմէական կայսրութեան. քաղաքականին հետ խախտեց նաեւ կրօնական — եկեղեցական միաբանը: Կտրեցաւ յաւէտ Հայ ժողովուրդի սիրտը «քրիստոնեայ ուղղափառ» կայսեր բարեկամութենէն և պաշտպանութենէն. հաւատքը աստուածափառ կայսեր, որ քահանայապետն էր Յունական եկեղեցւոյն, այնուհետեւ միշտ կասկածելի պիտի ըլլայ Հայ ազգին համար, մինչև խորշուու չափ:

Յագկերտ աւելի կատաղօրէն շարունակեց Շապուհի սկսած կրօնական պատերազմը, դարձուց զէնքերն Յունաց դէմ, խոնարհեցուց Բիւզանդիոնի տէրութիւնն և ստիպեց աննպաստ պայմաններով հաշտութիւն կնքել. աւելի վատն այն եղաւ որ Յագկերտի պահանջին վրայ Կ. Պոլիս ապաստանած քրիստոնեայ պարսիկներ կրկին մատնեցին արիւնախում դահիճի ձեռքը. ահա թէ ո՛րքան հին Հռոմէական ոսկին, թուի կապարի փոխուել էր Բիւզանդիոնի մէջ:

Յետ այս նախատալից հաշտութեան՝ Արքայից արքան բոլոր ուժով զէնքերը

1. Խոր. Գ. ԺԸ. 430.

դարձուց Հայաստանի դէմ. նախ փորձեց սիրով կամ սպառնալիքով իր կողմն որսալ Հայոց եկեղեցական դասը, վասն զի կղերը եթէ Մազդեզանց կրօնքն ընդունէր, ազգն ու նախարարները կը հետեւէին իւրենց առաջնորդներուն: Սակայն Արտաշատու ժողովի Եպիսկոպոսաց և մեծամեծաց ջանքերից պատասխանը ի հերքումն Մոզդեզու կրօնքին, յուսահատեցուց Յազկերտը եւ Միհրներսէնը. պատերազմը անխուսափելի դարձաւ:

Հայաստանի հոգեւոր Նուիրապետութեան անվախ, աներկիւղ, քաջագոր ջատագովականը Քրիստոսական հաւատոյ պաշտպանութեան, միակն է Եկեղեցական պատմութեան մէջ: Գերագոր Արքայից արքային, անգէն մարդիկ՝ աներկիւղ կը պատասխանեն մահու սպառնալիքին դէմ, «Սուր քո և պարանոց մեր»: Այդ հոգին պիտի սաւառնի Հայ ճարտարապետութեան մէջ, որ պիտի բղխէ հայ մարտիրոսներու հոգիէն և վերասլացիկ թռչի դէպ ի երկրնքի բարձունքը: Սակայն մեր եպիսկոպոսները յանձնապատան չեն, այլ կը զիմեն այն ամէն ներքի և կարելի միջոցներուն, որով կարող են պաշտպանուիլ անհաւատներու մըրկին դէմ. ուստի առնոք՝ առանց յոյսերնին կտրելու վերին օգնականութենէն, կ'որոշեն զիմել իրենց հաւատակից Հռոմէական աշխարհին: Աւտաշատու ժողովի եպիսկոպոսներէն շատերը՝ Բիւզանդիոնի մէջ ունէին իրենց դասակից բարձրաստիճան եկեղեցականներ և ծանօթներ Սինկղիտոսի մէջէն, որով խրախուսուած աղաչական նամակ մը ուղղեցին ուղղափառ կայսեր, զիտան Բիւզանդիոնի եկեղեցոյն: Կայսրը հետեւելով իր զօրավարներու խորհուրդին՝ զիւրաւ մերժեց Հայոց խնդիրը: Եղիշէ կը գրէ. «Իսկ անարիս այս Անատոլիոս լաւ համարէր պահել զուխտն հեթանոսաց վասն մարմնական խաղաղութեան, քան պատեւրազմակից լինել ուխտին քրիստոնէութեան»: Այս հարուածը թերեւ թեթեւ զար Հայոց, խոր և անմոռանալի վէրք չբանար անոնց սրտին մէջ, և նոյնպէս

Թէոդոս Փոքրի դառն պատասխանն ալ կուլ տալով, որ Ս. Սահակի գրած թղթին մէջ ըսած էր. «Եւ մեղադրեցաք (զՔեզ) յոյժ. զի ամենայն սրտիւ միտեցաք զհետ հեթանոս թագաւորի, և մեզ և ոչ թղթով բաւականացաք ծանօթանալ»: Մարկիանոս կայսրը գանգատելու բան չունէր: Բայց անոր համար անբուժելի խղիւսալթեալ վէրքը պիտի մնար Հայոց սրտին մէջ, որովհետեւ «բարեպաշտ» կայսեր զօրավարը «փութացաւ արձակեաց դեսպանս առ թագաւորն Պարսից... և եմուտ ընդ նմա յուխտ հաստատութեան՝ ձեռնթափ լինել ի զօրացն Հայոց՝ զօրու և զինու և ամենայն օգնականութեամբ»: Այս ստորկական ծառայութեան պէտք չունէին Պարսիկները, այլ միայն ցոյց կու տայ Յոյներու կրօնական և ազգային ատելութիւն մը Հայոց դէմ, որով ուղղակի դաւաճանութիւն էր Յոյներուն ըրածը, թիկունքէն հարուածելով հաւատքի համար քաջաբար մարտնչող նահատակները, և իրենց կողմի Հայերուն անգամ կ'արգիլեն մասնակցիլ իրենց եղբայրներուն հետ՝ հաւատոյ պատերազմին: Մինչ Մարկիանոս Գաւառաւոր յապետը զբաղած է Եւտրեքսի կարի մը գիւնի հնարած շաղկապութեամբ, Մարսի ստորոտը 60 հազար նահատակներ, կը վառին և կը զինուին մեծ կռուին, իրեւ հարսանեկան ուրախութեան: Հոն Եկեղեցականութիւնն է պարգած հաւատոյ զրօքը և Դեռնդ երէց կը գեղու իր սրբաւէն յորդոր և խրախոյս ի լուր դիւցազններուն և առիւծասիրտ զօրականին. «Այսօր եպիսկոպոս և երիցունը և սարկաւազունը, սաղմոսերգողը և զրակարդացը, իւրաքանչիւր կարգեալ կանոնաւ՝ իբր վառեալք զինու և պատրաստեալք ի պատերազմ, կամին ընդ ձեզ յարձակել, հարկանել զթշնամիսն ճշմարտութեան»:

Խորանն վկայութեան, անապատի մէջ, գոց էր, ծածկուած էր, մութ էր ուր Գահանայապետը կը մտնէր զոհ մատուցանելու. Արտազու դաշտին մէջ Սեղանը

1. Եղիշէ. յեղ. 2.

բացօթեայ, սօսիներու բարեգուշակ հովանիին տակ, բարձունքի վրայ կանգնեցին. «Վասն զի Բարձրեալն ոչ եթէ ի ձեռագործ տաճարս բնակէ». բայց այն մարդիկ որ զոհուելու կոչուած էին, կը յիշեն Առաքելոյն խօսքը թէ «Մարմինք ձեր տաճար են Հոգւոյն Սրբոյ». այդ տաճարին մէջ հաղորդուեցան սուրբ մարմնոյն և արեան Տեառն. և ինչպէս Ս. Ոսկերեան կ'ըսէ, ամէն մէկն իբրեւ առիւծ անպարտելի յարձակեցան Պարսից սեւագունդ բանակին վրայ: Վարդանանը իրենց Սուրբ արիւնով փրկեցին Եկեղեցին, կրօնքն ու ազգին պատիւը:

Թագաւորական գաւազանէն զրկուած ժողովուրդը խմբուեցաւ իր Եկեղեցւոյ Հօտակաւին շուրջ. քաջ հովուի ցուպին յանձնուեցաւ, որ պատրաստ էր իր անձը դնելու իր ոչխարներուն և գառներուն վրայ: Կրօնքը մեծ դեր կատարած է ազգերու ճակատագրին մէջ: Իսկ Հայերուս համար Կրօնք և Հայրենիք սերտիւ կը միանան ազգութեան հետ. եկեղեցական հարցեր կապուած էին ժողովուրդի գոյութեան հետ. աւանդապահ իր հայրենի սովորութեանց, կղզիացած ամփոփուեցաւ իր մէջ, տակաւին Քաղկեդոնի լուրը չառած, ապաւինելով Ամենասուրբ Երրորդութեան հաւատքին, զոր քարոզած եւ սորվեցուցած էին Գր. Լուսաւորիչ և Եկեղեցւոյ Ս. Հայրերն և Տիեզերական Ժողովները:

Նախ Թէոդոս Մեծի Հայաստանի բաժանման և ապա Վարդանանց պատերազմին առթիւ եղած դիմումներու մերժումն և անկից ծագած աղէտները՝ և համօրէն այն աշխարհի աւերումը, զոր Հռոմայեցիք իրենց «գեղեցիկ դաստակերտ» կոչէին, զգուած Յոյներէն, Հայ ազգը չուզեց այլեւս յարաբերութիւնը շարունակել, յուսալ և վստահիլ անոնց վրայ, և ոչ առնչուել իւր մ'ունենալ նաեւ արտաքին նշանով: Վահանի երկարամեայ ապստամբական կռիւներուն ժամանակ, բնաւ չյիշուեցաւ հզօր կայսեր գոյութիւնը և անոնց հաւատակցութիւնը: Վահան Մամիկոնեան իր

մղած դիւցազնական կռիւներուն մէջ միանգամայն աւերուած եկեղեցիները նորոգեց և նորեր կառոյց: Հայրենի աւերակներու մէջէն կրօնքի վերածնունդն սկսաւ, հաւատով դալարացաւ Հայաստան երկիրը, Վահանի յաղթանակը պսակեց սուրբ Եկեղեցին: Դուինի Մայր Տաճարին մէջ, Ս. Կաթողիկոսն Հայոց Յովհան, բերկրեալ ցնծալից սրտիւ՝ կ'աւետէր հանդիսատես ժողովուրդին. «Ահա սիրեցէք զեկեղեցին և սիրեցայք յեկեղեցւոյ, զթագաւորս քաղցրացոյց եկեղեցի, զգազանս ընտելացոյց, զգայալ՝ գառինս արար, զձեզ պայծառացոյց, զթշնամիս ճշմարտութեան ամաչեցոյց»: Վերջին բառերուս մէջ թուի ալինարկութիւն մը Անատոլի և Փլորենտի դաւաճանութեանը, որով ուզեցին ձեռնադրել Հայաստանի ի սպառ կործանման:

Վահան՝ Հայաստանի Մարգարէն կը նշանակուի, Պարսից բացարձակ իշխանութեան տակ: Մեծն Թէոդոս Հայաստանի բաժանումն ըրաւ նաեւ իբրեւ կրօնապետ. կաթողիկոսութիւնը հողատիրութեան հետ կապուած էր, անով Հայոց Եկեղեցին ելաւ Յոյն Եկեղեցւոյ իրաւասութենէն: Թէոդոս քաղաքական ապահովութիւն փնտռած ժամանակ, Հայաստանը բաժնելով՝ պատճառ եղաւ երկու ազգերու միջեւ եկեղեցական բաժանման եւս: Ատտիկոս առանց կայսեր հրամանին իրաւունք չունէր արտօնելու Ս. Սահակին որ Յունաց կողմը վարդապետէ: Եւ որովհետեւ լաւագոյն և ընդարձակագոյն, ազգին մեծամասնութեամբ, Պարսից բաժին ինկաւ յորում էին թագաւորական տեղերը, Վաղարշապատն և Կաթողիկոսական Աթոռը, առանց աղմուկի և խռովութեան, Օգոստոսիա կայսեր վճռով, Հայաստանեայց Եկեղեցին պաշտօնապէս դադրեցաւ կապ կամ կախումն ունենալէ Կեսարիոյ Աթոռին հետ, և Հայոց Կաթողիկոսը նովին իսկ գործով դարձաւ Ինքնագործ Հայրապետ: Այսպէս Խոսրով Գ առանց Դապուհի հրամանին Կաթողիկոս նշանակելով Ս. Սահակը աթոռագլուրկ եղաւ. Վաղարշապատ Վաղարշ հաճութեամբ վերակոչեց

յԱթոռն . Յագկերտ ձգեց իշխանութենէ
 և Շմուէլ ասորին նշանակեց . այս փո-
 փոխութեանց ժամանակ կեկարիոյ արթուն
 մեծ արքեպիսկոպոսները լեցին և ըն-
 դունեցան կատարուած եղելութիւնը : Այս-
 ինքն այն կապը՝ զոր Պապ թագաւոր ,
 իբրեւ Հայաստանի իշխող, փորձեց խզել
 և յանդիմանութիւն ընդունեցաւ սուրբ
 Բարսէլէն, վասն զի Պապ գերիշխանու-
 թեան և իրաւասութեան տակն էր Բիւ-
 զանդիոնի կայսեր : Այս բանս լաւ գիտէին
 Սահակ և Մեսրոբ, որոնք ուղղակի Բիւ-
 զանդիոն զիմեցին իրաւատէր կայսեր :

Այս պարագան, անշուշտ թէոդոս Հա-
 յաստանը կիսած ժամանակ բացատրած
 էր Արքայից արքային և անոր հասկցու-
 ցած որ կաթողիկոսութիւնն աշխարհական
 իրաւասութեան կը պատկանի, որով Յագ-
 կերտ՝ զՍ. Սահակ «ընկեց ի կաթողիկո-
 սութենէն» և յարգեց ձեռնադրութեան
 իրաւասութիւնը, որ քրիստոնէական կրօն-
 քին, դաւանութեան կը պատկանի, որով
 Յագկերտ կ'առնէ Ս. Սահակէն այդ իշ-
 խանութիւնը և միայն ձեռնադրութեան
 իշխանութիւնը կը թողու իր տէրութեան
 սահմաններուն մէջ : Ուստի խոսքով երբ
 Ս. Սահակը կաթողիկոս նշանակեց, նա
 իրաւունք ստացաւ այնուհետեւ կոչուելու
 ինքնագլուխ կաթողիկոս Հայաստանեայց
 եկեղեցւոյ : Վահանի ժամանակ՝ Յովհանն
 Մանդակունին ապստամբներու դասէն էր
 և հաւասարապէս ինքնագլուխ կաթողիկոս
 էր Հայոց : Այնուհետեւ և ոչ զգեստուց
 կերպար պիտի ընդունին Յոյներէն :

Այսպէս քաղաքականապէս անդամա-
 տեալ Հայաստանը, և ԻՆՔՆԱԳՆՈՒԽԻ կա-
 թողիկոսութիւնն իր հօտին հետ, զուտ
 ազգային հողի վրայ կ'ամփոփուին . հոս
 է որ հողին կը ներգործէ հայ մարդու ներ-
 քին խորհրդոց վրայ և զինքը կը մղէ
 շեղելու արեւմտեան աշխարհի հեթանո-
 սական տիրող ոճէն, և իր եկեղեցւոյն
 արտաքին ձեւակերպութեան մէջ քրիս-
 տոնէական կնիք տալ . այս մտահոգութե-
 նէն ահա կը ծնի նոր ճարտարապետական
 ոճը, որ զուտ հայկական արուեստ կոչ-

ուելու իրաւունքը պիտի ունենայ, և մե-
 ծամեծ նուաճումներ պիտի ընէ գեղար-
 ուեստական բաժնին մէջ, ապագայ դա-
 բերու ընթացքին, մանաւանդ Հայաստանի
 սահմաններէն դուրս :

Հինգերորդ դարու երկրորդ կիսուն,
 բացառիկ կերպով Հայաստան ստիպուած
 էր դուրս գալ նոր եկեղեցական ճարտա-
 րապետութեամբ իր գոյութիւնն ապահո-
 վելու համար . գահագուրկ ժողովուրդը՝
 իր յոյսը դրած էր կաթողիկէի վրայ,
 պատսպարութիւնն անոր գաւթին մէջ,
 նոր ոճը նշանարան մը պիտի ըլլար իր
 դաւանութեան, և իր համաքաղաքական
 կենցաղին :

Հայ ճարտարապետը արիական ցեղի
 բնատուր հանճարով և ըմբռնումով, ցե-
 դային հոգեբանութեամբ խանդավառուած,
 այն բոլորներէ երբ Դուլինի մէջ քաղաքական
 և կրօնական ազատութեան դրօշը պար-
 զուած էր Գրիգորաշէն եկեղեցւոյ ճակա-
 տին վրայ, Վահան ուզեց լաւագոյնը և
 բարձրագոյնը շինել Տէր զօրութեանց Աս-
 տուծոյ տունը, այնպէս որ Բարձրեալն,
 որ ձեռագործ տաճարի մէջ չի բնակիր,
 իր բոլոր փառքով գայ և հոն բնակի,
 ինչպէս Սողոմոն կ'աղօթէր և կը խնդրէր
 Եհովայէն մտերմաբար խօսիլ և լսել ժո-
 ղովուրդի աղօթքը :

Քրիստոս իր հաւատացեալները ո'չ թէ
 ծառայ, այլ բարեկամ անուանեց, ուստի
 լաւագոյն պիտի խօսի անոնց հետ, քան
 ընդ Մովսէսի Սինա լեռան բարձունքին
 վրայ, որուն հրամայեց կազմել խորա-
 նը, և հոգւովը լեցուց Բեսելիէլ ճարտա-
 րապետը, որ Աստուծոյ ուզած ձեւով
 շինեց խորանը՝ Տապանակի համար : Նոյն
 Հոգին, Առաքելոյն «թէպէտ բաժինը շնոր-
 հաց են» ըսածին հաւատքով լեցուց նաեւ
 Հայ քարագործի միտքը և սիրտը և քրիս-
 տոսի ուզած ձեւով՝ յղացաւ մտքով
 շինեց կեդրոնական երկնակառոյց գմբէ-
 թաւոր տաճարը, ուր հաւաքուելու են
 հաւատացեալները լսելու Աստուծոյ պատ-
 գամը, Նոր պատուիրանը՝ զիրար սիրելու,
 ներկայ ըլլալու հաղորդութեան փրկչական

սուրբ և անմահ պատարագին : «Եւ եկեալ
 հասանէր այնուհետեւ ի վաղարշապատ
 քաղաք հանդերձ ողջախորհուրդ և աննհնգ
 ուխտապահ նախարարօքն Հայոց . կատա-
 ընէր զսովորական ուխտս և զպատարագս
 ի սուրբ եկեղեցւոյն կաթողիկէի, զոր
 հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շը-
 քեղութեամբ՝ զհնացեալ գործ նախնեացն
 իւրոց, քաջ զօրավարն Հայոց Մամիկո-
 նեանն Վահան» : Ոչ քարացած Սամարիոյ
 և ոչ անհաւատարիմ Երուսաղէմի տա-
 ճարները, իրենց դասական և ճոխապա-
 ճոյճ կերտուածքով պարտաւորեցուցին
 պիտի ըլլան լեռնաբնակ Հրէաստանին :
 Հայ ճարտարապետն երբ ձեռնարկեւ է
 կազմել Հայ եկեղեցւոյ ուրուագիծը, նա
 անշուշտ խորհած է տալ անոր ամենայն
 կարեւոր մասերը, որ ունենան իրենց յա-
 տուկ ծիսական նշանակութիւնը : Նա մըտ-
 քով մի առ մի որոճացեր է քրիստոնէական
 կրօնքի ամէն սրբութիւնները, և հաւա-
 տացեալներու աչքին առջեւ ուզած է դը-
 նել խորհրդանշանը, ինչ որ կը դաւանի
 հոգւով և ճշմարտութեամբ : Նա Ամենակալ
 Աստուծոյ համար տուն պիտի շինէ . կրնա՞ր
 տարբեր կերպով մտածել քաղաքական
 ճարտարապետէն, որ կոչուած է թագա-
 ւորի մը արքունիքը կերտելու . որքան
 հոգ, որքան խելք պէտք է թափէ թա-
 գաւորի քմազարդ յարմարութիւններն յո-
 ընելու, որոնք բաւականութիւն տան
 պրքունիքին : Միայն այս տարբերու-
 թեամբ որ երկրաւոր թագաւորները կը
 սիրեն ճոխութիւն, շքեղութիւն, արտաք-
 նայարդար փայլ՝ մարմնոյ աչքերը շլա-
 ցնելու համար : Իսկ Աստուծոյ տունը
 պիտի ըլլայ պարզ, վսեմ, անսեթեւեթ,
 աղօթաւորի միտքը ցրուող առարկաներէ
 զերծ, խորհրդագգած որպէս զի ներս
 մտնողն երկիւղածութեամբ երկրպագէ Ս.
 Սեղանին :

Արդարեւ զիտուած է այդ ցանկալի
 պարզութիւնն ու վսեմութիւնը Հայ քրիս-
 տոնէական ճարտարապետութեան մէջ :
 Հաւատացեալն առաջին տեսութեամբ կը
 յափշտակուի դէպ ի վեր, և իսկոյն կը

զգայ որ մթնոլորտը սուրբ է . ամենայն
 ինչ, քարերն անգամ կը խօսին իր սրը-
 տին, կը պատմեն դաւանած կրօնքին
 ճշմարտութիւնները, բովանդակուած Հա-
 ւատոյ Հանգանակին մէջ, զոր բարձրա-
 քարոզ կը լսեցնէ Սարկաւազը պատարագի
 մէջ՝ Աւետարանէն յետոյ :

Ահա հայաշէն եկեղեցւոյ մէջ արտա-
 յայտուած խորհրդական եւ կրօնական
 մտքերը :

Երկնքի նմանութեամբ ԳՄԻԵԹԸ՝ կ'ամ-
 փոփէ սերորէից և քերորէից դասը, հին
 և նոր սուրբերու գումարը, մասնակից,
 հաղորդակից լինելու Ս. Սեղանին առջեւ
 հաւաքուած հաւատացեալներու աղօթքնե-
 րուն և փառաբանութիւններուն, զոր կը
 մատուցանեն Ամենասուրբ Երրորդութեան :
 Երկնից արքայութիւնն է այն և Հաղոր-
 դութիւն սրբոց : Իսկ երկրի վրայ Տանը
 յատակը՝ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱԳԱՐԱԿՆ է,
 յորում Քրիստոսի սերմանած բարի ցո-
 րենի հետ՝ որոմն ալ կը բուսնի : Այդ
 ագարակին հիմքը կը կազմեն Նահա-
 պետներն եւ Մարգարէները հին Ուխ-
 տի, իսկ Նոր Ուխտի հիմն է ինքը Քրիստոս
 և Վէմ գլուխ անկեան, որուն վրայ հիմ-
 նուեցան Առաքեալներն ու իրենց քարո-
 ղութեամբ բարձրացուցին պատերը եւ
 քարոզեցին Աւետարանն աշխարհ ամե-
 նայն : Այս խորհուրդը Ս. Պօղոս գերագոյն
 կերպով բացատրած է իր թղթերուն մէջ :
 2ՈՐՍ ՍԻԻՆԵՐԻՆ են չորս Աւետարանիչնե-
 րը, բարձրոյք, վեր բռնող Երկնից արքա-
 յութիւնը, Եկեղեցւոյ Միութիւնը, սին և
 հաստատութիւն ճշմարտութեան, զԲանն
 կենաց զոր Քրիստոս Տէրն քարոզեց և
 սորվեցուց : 2ՈՐՍ ԿԱՄԱՐՆԵՐԸ՝ աստուա-
 ծարանական չորս առաքելութիւններն
 են³, որ խարխիւ կը կազմեն Երկնաւոր
 թագաւորութեան, իսկ ԿԱՄԱՐԱՊՍԱԿՆ, որով

1. Ղազ. Փարպ. էջ 479.
 2. Գործք. Բ. 9.
 3. Աստուածարանական առաքելութիւնը երեք են
 Աստուծոյ կողմանէ. մէկը մարդու կողմանէ. Հաւատք,
 յոյս, սէր և բարեգործութիւն, որ է՝ «Սիրեսցես զըն-
 կեր քո իբրեւ զանձն քո» :

չորս աղեղները կը միանան՝ կատարեալ սէրն է որ իրարու հետ կը զօղէ յաղթական և զինուորեալ Եկեղեցին։ Ըստ Առաքելոյն՝ Հաւատքն և Յոյսն անկանին և խափանին երեւելի աշխարհիս հետ, չափուած են մարդկային կեանքով, «Սէր ՈՁ ԵՐԲԵՔ ԱՆԿԱՆԻ»։ Ըրումն օրինաց Սէրն է, որով վերինը և ներքինը կը զօղին իրարու հետ՝ կամարակապով, որուն վրայ վերեւ կը հանգչի Գոթէթը՝ ուր Քրիստոս թագաւոր ամենակալն, անսահմանն և յաւիտենականը կ'իշխէ աստուածութեամբն ու միահեծան իշխանութեամբը. իսկ ըստորեւ Եկեղեցին հաւաքուած, Քրիստոսի սուրբ և անարատ հարսը, բազկատարած պաղատագին կ'երգէ առ փեսայն երկնաւոր, երբ երեւի փառք Հօր և հրեշտակաց սրբոց. «Յորժամ Եկեղեցի հարսնացեալ միանայ ընդ փեսայիդ, ընդ իմաստուն սուրբ կուսանացն, արժանացո՞ւ առագաստին զմեզ ընդ նոսին երգել զփառս ի բարձունս»։

Ըստ մեր համոզման՝ մարդկային ուսմանէ և ճարտարագործութենէ աւելի՝ հաւատքը մեծ դեր խաղացեր է քրիստոնէական ճարտարապետութեան մէջ։ Հայը առկուցն՝ Լուսաւորչի քարոզած Նիկիական հաւատքով, զիմացեր է ապականիչ գայլերու նախճիրներուն, արիւնով լուացեր է իր հողը, որուն վրայ կանգներ է իր եկեղեցիները։ Նա տեսաւ և զգաց որ լքուած է հզօրներէն, «աստուածաման կայսրնեւրէն, սխալական մարդիկներէն յուսակոթոյս» աչքերն յառեր է երկինք ու աղօթեր. «Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն»։

Նայեր է նա, և պէտք է միշտ նայի, իր բարձր, ճերմակ և անվախ սարերուն, որոնց մէջ ծերագոյնը՝ ամպածրար Արարատը՝ փաղփուռ և պաղպաջուն զլիւծը, ակնապարար կապոյտ երկնքի տակ. եւ հոն տեսեր է երեւոյթն ու նմանութիւնը կամարին որ կը նկարուի ցօղացող անձրեւի ժամանակ, այսինքն, Աստուծոյ ողորմութեան ծիածանը կարակնակերտ,

եռագոյն՝ Մասեաց գագաթէն և Այրարատեան դաշտին վրայ ձգուած՝ վաղարշապատի կաթողիկէին վրայէն. յիշեցնելով մարտիրոս ժողովուրդին՝ Աստուծոյ կնքած հաշտութեան և խաղաղութեան դաշինքը Նոյի հետ։

Աստուած իր անփոփոխ և յաւիտենական գաղափարով լաւագոյն երկիր մը չէր կրնար ընտրել. վասն զի հոն իջաւ եւ ոտնաձայն հանելով Ադամին իմացուց իր գալը։ Նոյի աւանդութիւնը երկար մնաց իր սերունդներուն մէջ, որոնք Հայաստանի հողին վրայ ապրեցան։ Անոնք իրենց յատուկ բարբառով սրբազան սարը կոչեցին Մասիք, այսինքն ազատ, զատուած յամենայնէ, անթեւ, անշղթայ, տափարակ դաշտի երեսէն միայնակ, անվերջով, հաստատուն և վիթխարի հասակով կանգնած, հազար ու հազար դարեր տեսաւ հեղեղներու նման ազգերու գալն ու ելն թալը. միայն վերջին հայ ցեղը մնաց հոն իբր առաջնորդ, որ իր անունը դրոշմեց անոր բերեղեայ հողերուն վրայ, առաւ անոր հողին, ապրեցաւ անոր շունչով, հայրենիքի պաշտպաններն հիմա կը հանգչին անոր հովանիին տակ։

Հայ ճարտարապետը Մասիսէն ներշնչուած, անոր նման կառուցեր է իր կաթողիկէները վսեմ, երկնասլացիկ, ըստուար, հաստատուն, ազամանդեայ կուրծքը տալով բարբարոսաց հարուածներուն, և տարերքներու բռնութեան դէմ, աւելաւորակներէն շատերը վիրաւոր և անդամահատ՝ կանգուն են դեռ, իբրեւ բողոքահաւոր մարդոց անիրաւութեան դէմ, և անոնց ցաւագին սրտէն բխած արձագանքը մեծ դաշնակիցներէն արդարութեան և իրաւունքի պահանջ մ'է։

Գիր և զրականութիւն փրկեց Հայ ազգը կորուստէ, գիր և տպագրութիւն պիտի փրկէ Հայաստանի հին աւերակները։ Աւիշան կարող եղաւ այսպէս ողջունելու Նոր Անիի կանգնումն և յուսալ որ բարբարոսներն անկարող պիտի ըլլան անոր վրայ դնել իրենց համայնաջինջ թաթիբը։

Այլ օրանաւսն յեղյեղուկ
Համայնաջինջ ոսոխ բախդ՝
ժամանեալ գայ. վա՛ն եղուկ։ —
Ոչ, ոչ. նա չէ աստ անյաղթ
ԿԱԹՈՂԻԿԵՔՍ երկնապար,

Կոթողը ու արձանը խաչակնիք,
Եւ ՄԱՐԵՄԱՅՍ ՎԵՉ ՏԱՃԱՐ
Յաւերժութեան ունին նիգ.
Մի՛ բնաւ տեսցէ նա զԱՆԻ՝
Հետակորոյս ի գետնի։

Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

(Շարունակելի)



Խ Ո Ւ Ր Ր Ի - Մ Ի Տ Ա Ն Ն Ի

ԵՒ

Խ Ա Թ Թ Ի Ա Կ Ա Ն Լ Ե Զ Ո Ւ Ն Ե Ր Ը



«Բազմավէպ»-ի¹ մէջ ընդգծած խոր-
բիական հայեցողութեան և յարակից ցե-
ղախօսութեան և լեզուաբանութեան մասին
Պատ. Հ. Յ. Տաշեանի² գրած հետաքրքրա-
կան քննադատութիւնը կը յարուցանէ մի-
շարք նոր հարցեր։ Ուրախառիթ է տեսնել
որ գիտնական հօր և իմ միջեւ փոխանա-
կուած բանասիրական այս հետախուզու-
թիւնը արթնացուցած է զգալի շահագր-
գողութիւն նաեւ մեր բանիմաց ազգայինների
միջեւ, ինչպէս կ'ապացուցանեն ընթեր-
ցողներէ ստացած մի քանի նամակներս։
Քննութեան առարկայ հարցը և անոր հե-
տազօտութեան մերոտնկը ունին կրթական
նշանակութիւն մի քանի տեսակէտներէ և
ուրեմն արժանի են բազմակողմանի ու-
սումնասիրութեան։ Հ. Տաշեան կը նա-
խընտրէ տառականօրէն հետեւիլ որոշ գիտ-
նականների առաջադրած ենթադրութիւն-
ներին, և յաճախ անոնց փխրուն փաստերի
վրայ հիմնուած եզրակացութեան։ Որպէս
զուտ գիտական մերտ, ի հարկէ իրաւունք
ունի քննադատ հայրը. իսկ ես հետեւելով
հանդերձ այդ գիտական մերտին, կը
փորձեմ կիրարկել այդ եզրակացութիւն-

ները խնդրոյ առարկայ աշխարհամասի
տեղագրական ու պատմական հնարաւո-
րութիւններին, Թորրէրի³ հետ համոզուած
լինելով որ պատմական և ընկերային որոշ
ազդակներ դարերի ընթացքին յառաջ բե-
րած են համեմատաբար քիչ փոփոխութիւն
մեր բնավայրի և դրացի երկիրների մէջ։

Հետագայ տողերի մէջ յառաջ բերած
իրողութիւնները պիտի ապացուցանեն որ
հայ ուսանողներս հետեւելով հանդերձ
ամէն կարգի բեւեռագրեր առեղծոգների
ընթերցումներին, պարտինք որոնել պատ-
մական լուսարանութիւններ մեր դրացի
ազգերի զասական հեղինակութիւններէն,
ինչպէս նաեւ մեր մայրական կաթին հետ

1. «Բզմվպ.» 1931, Թ. 9-10, էջ 426-433. «Խոր-
բիներ քի Armenoidներ».

2. Տաշեան Հ. Յ. «Հանդ. Ամս.» 1931, Թ. 10-11,
էջ 618-631. «Հարեր եւ Ոչարարտեանք», դարձեալ
Տաշեան Հ. Յ. «Հանդ. Ամս.» 1932, Թ. 3-4, էջ 162-
179. «Հարեր եւ Ոչարարտեանք».

3. Հմտ. G. Forrer: Stratification des langues
et des peuples dans le Proche-Orient préhistori-
que. ի «Journal Asiatique». Tome CCXVII. 1930
Oct.-Déc. Թիւ. էջ 250.